ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
«ԲԵՐԴԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
07806692

հեռ. /0267/ 2-14-02 Ֆաքս ,fax /0267/ 2-14-02 E-mail: berdmedikal@yandex.com
ՀՀ Տավուշի մարզ ք.Բերդ Ա.Մանուկյան 25

12 հուլիսի 2024թ. N 263

«Կվանտա» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 01045958)
հասցե՝ ք. Երևան, Շոպրոնի 4-րդ նրբ., շ.6, բն.7

«Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից կազմակերպված «ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/08» ծածկագրով ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել «Կվանտա» ՍՊ ընկերությունը: Մասնակցության հայտի Հավելված 1-ով (ընթացակարգին մասնակցելու դիմում հայտարարություն) «Կվանտա» ՍՊ ընկերությունը հավաստել է, որ իրեն փոխկապակցված անձինք բավարարում են Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին: Գնահատող հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման արդյունքում «Կվանտա» ՍՊ ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից Ընթացակարգի 59, 77, 106 և 127-րդ չափաբաժինների մասով, ինչից հետո «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Կվանտա» ՍՊ ընկերության միջև 04.04.2024թ. կնքվել է ապրանքների մատակարարման ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/08-7 ծածկագրով պայմանագիր:

ՀՀ Պետական վերահսկողական ծառայության կողմից իրականացված վերլուծությամբ պարզվել է, որ բժշկական կենտրոնի հետ 04.04.2024թ-ին կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/08-7 պայմանագրով Վաճառող հանդիսացող «Կվանտա» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ՝ 01045958) իրական շահառու, 100% բաժնեմասի սեփականատեր և տնօրեն հանդիսացող Կառլեն Արթուրի Բաղդասարյանը հանդիսանում է 01.09.2024թ.-ից մինչև 01.09.2024թ. գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված «Գլոբալ Մեդիքլ Թրեյդինգ» ՍՊ ընկերության(ՀՎՀՀ՝ 08916483) 100% բաժնեմասի սեփականատեր Անի Արմենի Գրիգորյանի ամուսինը, հետևաբար իրենց միջև առկա է փոխկապակցվածություն, ինչը մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիր չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Կվանտա» ՍՊ ընկերության միջև 04.04.2024թ. կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/08-7 ծածկագրով պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը 2024թ. հուլիսի 12-ին միակողմանի լուծել է նշված պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները կազմում են համապատասխանաբար՝ 25250 (քսանհինգ հազար երկու հարյուր հիսուն) և 37875 (երեսունյոթ հազար ութ հարյուր յոթանասունհինգ) ՀՀ դրամ, որոնք անհրաժեշտ է վճարել «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության «Արդշինբանկ» ՓԲԸ «Տավուշ» մասնաճյուղում բացված 2477800186580010 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2024թ. հուլիսի 21-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները, ապա «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունը «Կվանտա» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին:

Հիմք ընդունելով «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության և «Կվանտա» ՍՊ ընկերության միջև 04.04.2024թ. կնքված ԲԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/08-7 ծածկագրով պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ տեղեկացնում եմ, որ այդ պայմանագրով ձեռք բերվելիք ապրանքները «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից գնելու դեպքում «Կվանտա» ՍՊ ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի բարձր արժեքով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Հարգանքով՝
տնօրեն Ա. Մարդանյան